ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՋԿ-ԳՀԾՁԲ-20/2-Փ ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 14 հուլիսի 2020թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Օհանջանյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Ալոյանը, Է. Մխիթարյանը, Ա. Մակարյանը և Գ. Հունանյանը:
Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:
Ընկերության ներկայացուցիչ՝ «Ջրարբի» ՍՊԸ-ի տնօրեն Մ. Պետրոսյանը

1. ՋԿ-ԳՀԾՁԲ-20/2-Փ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օրակարգ. Ջրային կոմիտեի կարիքների համար՝ Ոռոգման համակարգի առողջացում ծրագրի «Գետերի և հեղեղատարների տեղամասերի ամրացման և մաքրման աշխատանքներ» միջոցառման շրջանակներում թվով 12 աշխատանքների նախագծային փաստաթղթերի փորձաքննության իրականացման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՋԿ-ԳՀԾՁԲ-20/2-Փ ծածկագրով ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկների շուրջ բանակցություններ, որը տեղի ունեցավ 13.07.2020թ.-ի ժամը 11:00-ին:

Ելույթ ունեցավ գնահատման հանձնաժողովի նախագահ Վ. Օհանջանյանը և հրապարակեց «Ջրարբի» ՍՊԸ-ի կողմից 1-ից 7-րդ և 10-ից 12-րդ չափաբաժինների համար ներկայացրած գնային առաջարկները:

2. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բանակցությունների ընթացքում «Ջրարբի» ՍՊԸ-ի ներկայացուցչի կողմից կողմից 1-ից 7-րդ և 10-ից 12-րդ չափաբաժինների համար նոր գնային առաջարկ չներկայացվեց:

3 . ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1-ից 12-րդ չափաբաժինների գնահատման արդյունքում «Ջրարբի» ՍՊԸ-ին համարել ընտրված մասնակից:

Հրապարակել հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ 8 և 9-րդ չափաբաժինների մասով անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, իսկ 1-ից 7-րդ և 10-ից 12-րդ չափաբաժինների մասով անգործության ժամկետ կիրառելի չէ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի նույն հոդվածի 4-րդ մասի:

Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկ և պայմանգրի նախագիծ:

4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

Նախագահ	----------	Վ. Օհանջանյան
Անդամներ	----------	Գ. Ալոյան
	----------	Է. Մխիթարյան
	----------	Ա. Մակարյան
	----------	Գ. Հունանյան
Քարտուղար	----------	Ա. Սարգսյան